

## ՅԱՐՏԱՍԱՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԴԻՌՆԻՄԻՌՈՒ ԹՐԱԿԱՑՈՒ ՔԵՐԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՅԿԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՑԱՆ

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը նոր աստիճան է նշանավորում Քրիստոսի վարդապետության տարածման գործում։ Նվիրյալների ինքնագործունեություն լինելուց այն վերաճում է պետության կողմից հոգանավորվող քաղաքականության։ Զինավարչական միջոցները զուգակցվում են հմտորեն կազմակերպվող քարոզչական դործունեությանո։ Անհամեմատ մեծանում է խոսքի նշանակությունը։ Անցած ճանապարհի բոլոր ձեռքբերումները ընդհանրացնող Գրիգոր Տաթևացին հատուկ ընդգծում է Վարդան Վարդապետի (XIII դար) նշանավոր միտքը. «Մարդու երրորդութեամբ է կատարեալ. Հոգւով և մարմնով և բանիւ. և եթէ մինն պակասից՝ անկատար է մարդն»<sup>1</sup>։

Այս պայմաններում նոր վարդապետության քարոզիչները, թնականաբար, դիմում են պերճախոսության ավանդներին։ Հոգեոր գպրոցներում այն պարտադիր առարկա էր։ Կար մի պատճառ ևս. քրմերը փայլուն հռետորներ էին, առանց խոսքի համակարգված հմտություններին տիրապետելու, նրանց գեմ անհնար կլիներ պայքարել։ Արդեն V դարում մեզանում մշակել էր քարոզչության, ասել է թե՝ հրապարակային խոսքի վերաբերյալ ամբողջական մի տեսություն, որն ամուր հենվում էր հունական ճարտասանական արվեստի ավանդույթներին։ մոռացության չտալով հայրենի պերճախոսության ձեռքբերումները, ինքնության կնիք դնելով ուսուցիչներից սովորածին։

Այս առումով ուշագրավ են Դիոնիսիոս Թրակացու քերականության թարդմանությունը և նրա հայկական մեկնությունները։

Հների ըմբռնմամբ քերականությունը գիտություն էր խոսքի մասին ընդհանրապես, որ ներառում էր ոչ միայն լեզվի կառուցվածքի վերաբերյալ ուսմունքը, այլև ճարտասանության ինչ-ինչ հատկանիշներ, քննադատությունը, բնագրի տարաբնույթ քննությունը, ժամանակակից իմաստով՝ բանասիրությունը։ Ազգբնապես այն կոչված էր գրավոր և բանավոր խոսքի հմտություններ դաստիարակելուն։ «Քերականութիւն է հմտութիւն որք ի քերդողաց եւ ի շարադրաց իբրու բազում անդամ ասացելոց»<sup>2</sup>, – վկայում է Դիոնիս Քերականը։ «Քերդողաց»-ը ներառում է «Հոմերական» (գեղարվեստական) դործերը, իսկ «շարադրութիւն կոչէ զպատմութիւնս հրէից և հեթանոսաց զհին և զնոր, իսկ առ մեզ Մովսէսի և մարգարէիցն և

1 Գ ր ի գ ո ր Տ ա թ և ա ց ի. Գիրք հարցմանց. Երուսաղեմ, 1993, էջ 271։

2 Արուեստ Դիոնիսեայ Քերականի և հայ մեկնութիւնք նորին (ի լոյս էած եւ քնին արկ Ն. Աղոնց)։ Պետրոգրաֆ, 1915, էջ 83։

որք յետ Քրիստոսի»<sup>3</sup>: Ուշագբավ է, որ «բանաւորական վարժից» համար օգտագործվել են նաև «զալատմութիւնս հրէից և հեթանոսաց դհին և պնոր»:

Հին աշխարհի նշանավոր քերականներից է Դիոնիսիոս Թրակացին (170-90): Նրա «Արուեստ Դիոնիսայ Քերականի» գործը մեզանում թարգմանվել է<sup>4</sup> Վ գարում և երկար ժամանակ ընդունված է եղել իբրև քերականության և ճարտասանության դասագիրք: Թե որքան մեծ է եղել նրա նշանակությունը մեր դպրոցների համար, հաստատվում է այն տեսական հետաքրքրությամբ, որ հայ մեկնիչները ցուցարել են նրա հանդեպ:

Թրակացու գործը ավելի քերականություն է, քան ճարտասանություն (որի պատճառով զդացվել է անհրաժեշտությունը «Գիրք պիտոյից»-ի, թեունի «Յաղագս ճարտասանական կրթութեանց»-ի և «որ ինչ միանդամ այսմ հետեւին»): Նրանում արծարձգում են նաև հոետորական արվեստի հարցեր: ՈՒսաի այս զրքի թարգմանությունը մեզանում խթանել է ոչ միայն քերականական մաքի, այլև ճարտասանության, արվեստի տեսության զարդացումը:

Քերականության ուսուցումը ինքնանպատակ չէր: Այն կոչված էր ուսանողին խոսքի հմտություններ հաղորդելու նպատակին: Այդ միտքը շատ պատկերավոր է ներկայացնում Մագիստրոսը: Քերականությունը արթնացնում է գրավոր խոսքի մեջ ննջած գեղեցկությունները. այդպես քուրայում ոսկին է մաքրվում՝ դառնալով «Հրատեսակ»: Խոսքի իմաստալին և արտաքին կարեոր համարվող հատկանիշներին տիրապետողը կոչվում էր քերթող: «Քերթող է, որ զմասունս գիտէ բանին եւ ճանաչէ դգէմս խաւսիցն, զոր ինքն տեղեակ է լեղուին», – վկայում է Մովսես քերականը<sup>5</sup>:

Թրակացին քերականությունը վեց մասի է բաժանում՝ առանձնապես կարեռելով վեցերորդ մասը. «Դատումն քերդածաց»-ը դիտում է իբրև «լաւագոյն...յամենեցունց որք ներ արհեստիս են»:

Հայ մեկնիչներից Դավիթը, որ բանասերների պնդմամբ Անհաղթն է, իմացությունն այն գեպքում է համարում «կատարեալ», երբ ներառում է հիշյալ մասերի բոլոր առանձնահատկությունները: Մովսես քերականն ավելի պատկերավոր է արտահայտվում ով քերականության վեց մասերին չի տիրապետում հավասար հմտությամբ, «մասնական ծովագնաց է բանին եւ ոչ անդնդական խորոցն դիտակ»: Նա հատուկ ընդգծում է, թե յուրացման համար ոչ մի նշանակություն չունի սկզբից սկսելով վերջին կհասնես, թե՛ հակառակը. «Սոյնդունակ և ըստ մասին կատարումն, թեպէտ ի

### 3 Նույն տեղում, էջ 160:

4 Ակադեմիկոս Գ. Զահուկյանի համոզիչ քննությամբ Թրակացու բնագրի և թարգմանության տարբերությունները պայմանավորված են «թարգմանչի հայացքների» տարբերությամբ «Հեղինակի հայացքներից» (Գ. Զ ա հ ո ւ կ յ ա ն. Քերականական եռդղագրական աշխատությունները հին ե միջնադարյան Հայաստանում. Երեան, 1954, էջ 10): Հանդամանորեն ներկայացվում են այդ տարբերությունները շատ կարեոր եղբակացությամբ, թե «Հայերը հույնների նվաճումների համեմատ մի քայլ առաջ են շարժվում», ասենք Հնչյունների դասակարգման և այլ խնդիրներում (նույն տեղում, էջ 71): Մյուս կարեոր ընդհանրացումն այն է, թե «Թրակացու մեկնիչների սերունդը մեկնում է ոչ թե հունարեն բնագիրը, այլ նրա հայերեն թարգմանությունը, իսկ այդ երկուսը բավական տարբեր բաններ են», ուստի և նրանց անվանում են «Թրակացու քերականության թարգմանության մեկնիչներ» (նույն տեղում, էջ 49):

5 Արուեստ Դիոնիսեայ Քերականի..., էջ 159:

քերականութենէ սկիզբն առնելով ով առաջնորդէ մինչեւ ի վերջին մասն, եւ կամ ի վերջի մասնէն մինչեւ ի գլխաւորագոյն սկիզբն յորում ըստ առավել քաջայայտութեան եւ ծանալթ կացուցանելոյ զառաջարկեալսն լսողացն ընաանենայ եւ աւգաակարի»<sup>6</sup>:

Ոչ այնքան քերականության սահմանումը, որքան նրա բաղկացուցիչ մասերի քննությունը բացահայտում են հռետորական խոսքին, քարոզին ներկայացվող պահանջներ: Դժվար չէ նկատել, որ քերականությունը կազմող վեց «մասունք»-ից մի քանիսը անմիջապես առնչվում են ճարտասանությանը: Առաջին մասը վերծանությունն է՝ «ներկուու ըստ առողանութեան»: «Բառք քերականին» ցանկում վերծանությունը որսկես լնթերցանություն է բացատրված: Ուշ շըջանում ստեղծված բառդիրքը, անշուշտ, ավանդությունն է արձանագրում: Եթե նկատի ունենանք «ներկուու»-ի մեկնությունը՝ Հայկացյան բառարանում՝ «կիրթ, քաջ, կրթեալ... ներհուն, հմուտ աղեկ վարժած սորված» (հ. II, էջ 419), հասկանալի կդառնա, որ սա լիովին ճարտասանության ոլորտ է: Հիշենք, որ նոր վարդապետության տարածման արարողությունը քարոզին զուգակցում էր Աստվածաշնչից կամ կրօնական այլ գրքերից համապատասխան հատվածների ընթերցումը (մինչև գրերի գյուտոր՝ նաև ընթերցածի թարգմանություն): Այնքան մեծ նշանակություն է տրվել ընթերցանությանը, որ առանձին աստիճան է սահմանվել «ընթեցող յեկեղեցւոց որպէս դպիր»: Վերծանությամբ սկսելու պարագան շատ պատկերագոր ներկայացնում է Դավիթ Քերականը՝ «զմուտ դրան ի քաղաք իմաստութեան»: Պատկերը պատկեր, բայց բուն բացատրությունը ի հայտ է բերում հռետորական խոսքի համար գեղարվեստական գրականությանը հատկացվող դերի ըմբռնումը և՝ անցյալում, և՝ հայ քերականի կողմից թե ինչու նախ «քերգողաց» և ապա «շարագրաց» պետք է դիմել, ունի երկու բացատրություն «ամենայն արուեստաւոր զիւրն կամի յարգուն ցուցանել», այնուհետև՝ «նախադուռն իսկ եւ սկիզբն բանաւոր արուեստիս զիւրեացն ասեն լինել քերգողքն»<sup>7</sup>: Ամեն ոք ձգտում է իր արվեստը հարգանքի արժանացնել, ընդունելի դարձնել, տպագորություն գործել, դրա համար էլ ճարտասանը քերգողությունից է սկսում: Սա, ինքնին, գեղարվեստական ստեղծագործության բարձր արժեքավորում է: Բացի այդ քերգողությամբ պետք է սկսել, որովհետև «բանաւոր արուեստի» սկիզբը քերգողները դրեցին: Կա մի էական առանձնահատկություն ևս, որով պայմանավորված է վերծանությունը նախադասելը: Գրավոր խոսքի «անվթար յառաջքերութիւն»-ը «զարթուսցէ զլսաւզսն և ապա ընդ միմեանս շաղկապին»: «Քերդացած» (գեղարվեստական ստեղծագործություններ) և գրավոր խոսքի այլ տեսակների («շարագրաց») ներկուու «վերծանութեան» համար նշանագոր քերականն ինքը որոշակի կանոններ է նշում: «Եւ վերծանելի է ըստ ենթադատութեան, ըստ առողանութեան, ըստ տրոհութեան»<sup>8</sup>: Ենթադատությունը, որ խոսքի բովանդակությանը համապատասխան ձայնի և «ճահաւոր» (պատշաճ, հարմար, արժանավոր) շարժումների կիրառումն է, մեծացնում է խոսքի «զաւրութիւնը»:

6 Նույն տեղում, էջ 81–82:

7 Նույն տեղում, էջ 87:

8 Նույն տեղում, էջ 2:

առողանությունը բարձրացնում է խոսքի «արուեստն», իսկ «ի տրոհութենէն զպարունակ միտսն տեսանեմք»։ Բնական է, երբ իր հեղինակին հետեւլով՝ հայ քերականը ես նշանակություն է տալիս կետաղությունը, ավելի ճիշտ՝ արոհությանը, «որ զատէ և ընտրէ զբան ի բանէ»։ Ավելի ուշ վարդան Արեւելցին ատար կետից բաղկացած համակարգ պետք է մշակեր կետագրության գործածության վերաբերյալ<sup>9</sup>:

Ակաղեմիկոս Գ. Զահուկյանը հետագա քերականներից հիշում է Մամրիք Վերծանողին, որը առողանության նոր տերմիններ է օդտագործում՝ թափ, սոսկ։ Վերծանությունն, ուրեմն, ըստ առողանության կանոնների զեղարվեստական կամ այլ բնույթի բնագրի բնթերցումն է, որն ուղեկցվել է «ճահաւոր» շարժումներով։ Գեղարվեստական յուրաքանչյուր ստեղծագործություն, ժանրային նկարագրի թելաղբանքով, և խոսքի ամեն տեսակ առողանության յուրահատկություններ է պահանջում։ Հույն տեսաբանը ներկայացնում է հետաքրքիր մի շարք։ «Զողբերդութիւն դիւցազնարար վերծանեսցուք», – հանձնարարում է Թրակացին։ Նույնը կրկնելով՝ Դավիթ Քերականը նախ պետք է բացատրի ողբերդության ծագումը («առ ի պաշտաւն առեաւ Դիոնիսեայ ումեմն տուողի որթոյ») և ապա որոշ մանրամասներ հաղորդի «գիւցազնարար»-ի վերաբերյալ։ «պատմել ահաւորապէս և չքնաղ հանգոյն»… Հատուկ շեշտվում է այս բարձր ոճը երբեք չիջեցնելու, «Ճայն գոեհկաց» չդարձնելու անհրաժեշտությունը։ Ողբերդության հերոսները դյուցազուններ են, նրանց արարքներն են ներկայացվում, ուստի և հասարակ մահկանացուների ձայնով ու ոճով ողբերդությունները կատարել չի կարելի։ Հետո Անանուն մեկնիչը պետք է բացատրեր նոխագերդությունը։ «զողբերդութիւնս իւրեանց ի սկսանելն և կատարելն նոխազաւք մեծարեալ լինէին, որք նուիրէին ձաւնէւալք Դիոնիսեայ, գտողի որթոյ»<sup>10</sup>։ «Իսկ, ահա, զկատակերգութիւնն աշխարհաւրէն» պետք է վերծանել, գա «խրատս և յանդիմանութիւն» է պարունակում, – և վերամբարձ ոճը անհարիր է սրան։ Ատեփանոս Սյունեցի մեկնիչը ավելի է կոնկրետացնելու «աշխարհաւրէնը»։ Կատակերգության նյութը առնվում է «անարի»-ների, ծույլերի, «վատ կենցազավարութիւն» ունեցողների կյանքից, ուստի պետք է «վերծանել» հեգնական տոնով, նույնիսկ սուլոցով, անհաճո ձայներով, «որպէս ուամիկքն սովորաբար ստեղծանեն առ այնոսիկ»<sup>11</sup>։ Դամբանականը «ուժգնակի» պետք է ասել, «զիսանդազատականն թուլակի», չափածո գործերը «քաջորորակի» վերծանության են կարոտ, «քնարական քերդողութիւնն» ներդաշնակ։ Պետք է խստորեն պահպանել այս կանոնները, հակառակ դեպքում վերծանողները «զքերդողացն արութիւնս տապալեն» և իրենց «ծիծաղելիս յարկացոցնեն»։ Հետագայում Վարդան Արեւելցին մի կարեոր լրացում է ավելացնելու այս համակարգին։ Առողանությունը, խոսելու, ընթերցելու ոճը բնու-

<sup>9</sup> Վարդան Արեւելցի. Մեկնութիւն քերականի (այսուհետև՝ Վարդան Արեւելցի). Երևան, 1972, էջ 74։

<sup>10</sup> Արուեստ Դիոնիսեայ Քերականի..., էջ 128։

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 193։

թագրում է մարգու անհատականությունը. «Եւ բաժանես ըստ մարդոյ ո-ճոյն եթէ գոռող է և եթէ ողոք»<sup>12</sup>:

Հեանորդները հետաքրքիր լրացումներով ու մանրամասներով աս-տիճանարար բացելու էին հիշյալ ժանրերի և դրանց ներկայացման ա-ռանձնահատկությունները<sup>13</sup>:

«Զրուցագրութիւն»-ը, ըստ «Ներգոյս քերթողական եղանակս», երկ-րորդ «մասունքն» է: Հայկազյան բառարանի բացատրությամբ սա կարելի է հասկանալ իրեւ «տրամարանութիւն», «տրամախօսութիւն» (Հ. Ա., Էջ 753): Գ. Զահուկյանը այլ մեկնաբանություն է տալիս «Երկի մեջ հանգի-պող բանաստեղծական եղանակների բացատրություն»: Ըստ երեսույթին երկու մեկնությունն էլ ընդունելի են. Դավիթ Քերականը, օրինակ, զգու-շացնում է, թե ինդիրը չի հանգում «սովորական ինչ իւաւսք»-ին, այլ կամ «զքերդողացն արարուած»-ների, կամ տվյալ հեղինակի դաղափարնե-րի բացատրությանը:

Քերականության մյուս մասերը ճարտասանությանը վերաբերում են այս կամ այն չափով: Երրորդ «մասունքն», օրինակ («լեզուաց եւ հնագէտ պատմութեանց առձեռն բացատրութիւն»), ենթադրում է, ըստ Դավիթ Քե-րականի, «զիւրոյ լեզուին խաւսս եւ պատմութիւնս ինչ նախնեացն արա-բեալ լաւագոյնս համառօտապէս դիտել»<sup>14</sup>: Բարբառների և հայրենի հնա-գույն պատմության թեկուղ և համառոտ իմացությունը վարդապետին անհրաժեշտ է ընագրին առնչվող ինդիրները լուսարանել կարողանալու համար «իրրե հարցանիցի, դիւրաւ լուիցի»:

«Համեմատութեան տեղեկութիւն»-ը, իրեւ «քառերի անալոգիկ ձևե-րի» (Գ. Զահուկյան) ընտրությամբ զրադվող ընագավառ, կարող է նպաս-տել վարդապետի բառապաշարի հարստացմանը:

Վերջին՝ վեցերորդ «մասունքը»՝ «դատումն քերդածաց»-ը, պերճա-խոսության համար ևս ամենակարեոր մասն է, քանի որ գաղափարական որոշակի գիրքերից վճիռ է կայացնում դեղաբակեստական ստեղծագործութ-յունների և մնացած տիպի ըոլոր չարադրամքների վերաբերյալ: Նոր վար-դապետության ջատագով Դավիթ Քերականի համար ևս «դատումն քեր-դածաց»-ը «լաւագոյն է յամենեցուցն», որովհետեւ հանդում է հերձվածող-ների «ունայնարանութիւն» ու «աւտարոտի իւառնուածն» բացահայտելու գերագույն ինդիրին, որ նաև հայ աստվածաբանության գերագույն ինդիրներից է:

Ստեփանոս Սյունեցի Մեկնիչը, որ քերականության բոլոր մասերի ի-մացության գերագույն նպատակը հանգեցնում է «գեղեցկապէս» ընթեր-ցելուն (բանավոր խոսքին), որով ժողովրդին լսելի են անում նախնիների և աստվածային խոսքն ու դործը, այս վեցերորդ մասը կարեռում է իրը

12 Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի, Էջ 76:

13 «Դին աստուած ասի», ուրեմն՝ դյուցազնաբարը աստվածաբար է նշանակում. ելք «Դիոնեսիոս աստուած ազգին» տիտանները սպանեցին, նաև «գոռոզածայն լային աս-տուածաբար և ասէին, թէ՝ «Զերդ զեբզ ո՞վ լինի» և կամ «ո՞վ լնու զքո տեղն»: «Եւ այդ է դիւցազնաբարն թէ իմանաս»:

Կատակերդությունը ռամիկների կյանքից է, ուստի այն ռամկորեն կարելի է վերաբ-տադրել՝ «առանց քերականության ասիլ» (Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի, Էջ 78): Սյուն-ժանրերի համար էլ ուշադրության արժանի լրացումներ անում է:

14 Արուեստ Դիոնիսեայ Քերականի..., Էջ 85:

խոսքի (ներառյալ գեղարվեստականը) միջոց և եղանակ («զի ըստ սորին հրամանի ստեղծցի բանն»): Պատահական չէ նման կարևոր լրացումը. դիական և տեսական միտքը հասել է արդեն այն ընդհանրացման, որ «լրարձրագոյն է քերդողութիւն քան դերականութիւն»<sup>15</sup>:

Թրակացու քերականության թարգմանության մեկնությունները խթանում են ոչ միայն ճարտասանության, այլև արվեստի ու դրականության տեսության զարգացումը: Նկատված է, որ մեկնարանողները ոչ միայն հայացըել են այս կամ այն դործը, այլև դրանք թարգմանելիս կատարել են հավելումներ, կրծատումներ, զրսեորել են որոշակի վերաբերմունք՝ հավանություն են տվել, մերժել, լրացըել: «Թրակացու քերականության հայ թարգմանիչը ոչ միայն «ստրկորեն» չի ընդօրինակում բնագիրը, այլ հանդես է բերում բավական աղատամիա վերաբերմունք՝ կատարելով նրա մեջ իր համոզմունքներից և հայերենի առանձնահատկություններից բիող գանագան փոփոխություններ... Այս իմաստով թարգմանությունը ավելի շուտ փոխադրություն է, քան թարգմանություն»<sup>16</sup>:

Այսպես, աչա, թարգմանություններն ու դրանց մեկնությունները արդեն իսկ սկզբնավորում են հայ բանասիրության ամենատարբեր բնադրագուները: Դավթին հայանի են ճարտասանության երեք տեսակներ՝ «զուդահաւասար հատեալք ի սեռէ»՝ «ատենականաւն եւ բազխոհականաւն եւ կցորդականաւն... յորոց եթէ ոչ ունիցի ոք զմի ի նոցանէ ոչ կատարյալ ասի ճարտասան»<sup>17</sup>: Ադոնցն առաջարկում է այս «ոչ»-երից հրաժարվել, քանի որ հույների համար ճարտասանության այս երեք տեսակներից որեէ մեկին տիրապետելը բավական էր փառք և հռչակ ձեռք բերելու համար: Հիշենք, սակայն, որ Դավթիթը կատարյալ էր համարում այն Քերականին, որը հավասարապես տիրապետում էր քերականության բոլոր վեց «մասունք»-ին:

Արվեստի բնութագրման ասպարեզում Մովսես քերականը առաջ է անցնում իր ժամանակակիցներից արվեստի և բանականության փոփառագործ ազդեցության խնդրի դասական ըմբռնմամբ: Ըստ Մովսեսի, որ բանասիրության անդմամբ նույն ինքը հորենացին է, «մտքերը», «հանճարեղ խորհուրդները» արվեստի աղբյուրն են ու ակունքները, և ընդհակառակ արվեստն ինքն էլ է «աճեցուցիչ մտաց»: Աչա այսպես ընդլայնվում է արվեստը սերունդների փորձի ու հմտության արտահայտություն համարող թրակացու տեսակետը: «Քերդող է, որ զմասունս դիտէ բանին եւ ճանաչէ զդէմս խաւսիցն, զոր ինքն տեղեակն է լեզուին. զի քերումն ի վերայ ողորկութեան բանին ասացաւ, զի քերէ եւ սրբէ ըստ ամենայնի դատողական հրամանաց եւ բերէ ի ցանկութիւն լսողաց անրնդիմադրելի բանիւք»<sup>18</sup>:

Վերակի պարբերության մեջ շատ էական է «եւ բերէ ի ցանկութիւն լսողաց անրնդիմադրելի բանիւք» արտահայտությունը: Ընդդժվում է ոչ միայն քարոզչության բնույթը, այլև նրա նշանակությունը. քարոզչությունը

15 Նույն տեղում, էջ 191:

16 Գ. Զ տ հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 61:

17 Արուեստ Դիոնիսեայ Քերականի..., էջ 84:

18 Նույն տեղում, էջ 159:

յունը, այլ կերպ՝ աստվածարանական հրապարակախոսությունը՝ «անրնդ-դիմադրելի բանիւք» պետք է կարողանա ունկնդիրների մտքերը ձևավորել ցանկալի ուղղությամբ։

## ВОПРОСЫ КРАСНОРЕЧИЯ В АРМЯНСКИХ ТОЛКОВАНИЯХ ГРАММАТИКИ ДИОНИСИЯ ФРАКИЙСКОГО

*ГАРНИК АНАНЯН.*

### Р е з ю м е

Необходимость укрепления христианства в значительной степени повысила значение речи (устной и письменной). "Человек в единстве совершенен: душой, телом и словом, и если одно из них отсутствует – несовершенен человек", – резюмирует Вардан Вардапет (XIII в.). На первый план выступают методы усовершенствования устной и письменной речи. Сформировавшаяся в V в. армянская богословская публицистика прочно опиралась на особенности греческого риторического искусства, не предавая при этом отечественные традиции и ставя печать самобытности на усвоенном. Формируется целостная теория, которая в последующих веках развивается и обогащается. В этом плане интересные материалы содержат армянские толкования грамматики Дионисия Фракийского (170 – 90 гг. до н. э.). В них широко исследуются способы и методы предъявления речи общественности (произношение, интонация, мимика и жесты). Особый интерес представляют типы красноречия, взаимодействие риторической речи и других наук, исследование целей проповеди. Толкователь V в. Давид (по утверждению филологов, Давид Анахт), например, считал, что цель оратора – силой слова "привести слушателей к единому желанию".

## THE RHETORIC ISSUES IN THE ARMENIAN INTERPRETATIONS OF THE GRAMMAR BY DIONYSIOS THRAX (THRAKATSI)

*GARNIK ANANYAN*

### S u m m a r y

The necessity to strengthen the Christianity increased greatly the importance of the speech (oral and written). A person is perfect with three things: spirit, body and speech. If one of these lacks, the man appears to be imperfect, Vardan Vardapet (the 13th century) generalizes. The improvement methods of the oral and written speech are pushed to the foreground. In these conditions the role of rhetoric speech increases. The Armenian theological publicism established in the 5th century was strongly based on the specific features of the Greek rhetoric art individualizing the acquired knowledge and not ignoring national traditions. A complete theory was developed which has been expanded and enriched during the following centuries. In that sense the Armenian interpretations of the Grammar by Dionysios Thrax (Thrakatsi) (170-90 B.C.) contain interesting materials: the methods and means of how to introduce the speech to the general public are discussed thoroughly (pronunciation, sound intonation, mimics and gesture). The research of the relationship between rhetoric types: rhetoric speech and other sciences, the objective of the propaganda are of a special interest. For example, David, the 5th -century interpreter (David Anhaght—according to the philologists – G. A.) considered the aim of the orator to be the creation of a common goal by means of speech.